ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ
ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 9

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՌԱՋԻՆ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՉՈՐՐՈՐԴ ՆԻՍՏԻ

Ք.Ապարան 21 մայիսի 2025թ. ժ.11:15

ՆԻՍՏԸ ՎԱՐՈՒՄ Է՝ Ապարան համայնքի ղեկավար՝ Կարեն Եղիազարյանը:

ՆԻՍՏՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒՄ Է աշխատակազմի քարտուղար Իդա Թադևոսյանը:

ՆԻՍՏԻՆ ՄԱՄՆԱԿՑՈՒՄ ԷԻՆ Ապարան համայնքի ավագանու 21 անդամներից 12-ը՝ Կարեն Մերուժանի Եղիազարյանը, Արկադի Գալուստի Կարապետյանը, Դավիթ Ռուբիկի Ենոքյանը, Աղաբեկ Սևակի Մանուկյանը, Վարդան Ջավենի Մխիթարյանը, Գոո Հովհաննեսի Պետրոսյանը, Հայկ Սամվելի Սեդրակյանը, Խաչիկ Հայկի Գեղամյանը, Արթուր Վանիկի Խալաթյանը, Վահան Կամոյի Մակարյանը, Հովհաննես Գալուստի Սահակյանը, Արարատ Աղվանի Ավդալյանը:

ԲԱՑԱԿԱՅՈՒՄ ԷԻՆ ավագանու անդամներ՝ Արման Արաքսի Ասատրյանը, Արտյոմ Անդրանիկի Դավթյանը, Սուրեն Սլավիկի Սարգսյանը, Ժորա Կոստանյանը, Արտյոմ Ռոբերտի Կարապետյանը Սևակ Աշոտի Սաֆարյանը, Արշակ Սուրենի Սարգսյանը, Աղվան Գեորգիի Երեմյանը, Կարեն Դավթի Կարապետյանը:

Ավագանու նիստին մասնակցում էին զեկուցողներ քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետ՝ Վահե Սուքիասյանը, Ֆինանսատնտեսագիտական բաժնի գլխավոր մասնագետ Սերինե Շերիկյանը և ԿՄՍԵԱՍԱ բաժնի պետ Գագիկ Խաչատրյանը և գլխավոր մասնագետ Էլյանորա Միրզոյանը, հարակից զեկուցող ,,Արսեն Խնկոյան,, Ա/Ձ տնօրենը, մշակույթի կենտրոնի տնօրեն Գ.Գևորգյանը: Նիստին ներկա էին համայնքի ղեկավարի օգնական Արկադի Ալեքսանյանը, «Լեգիտիմուս» իրավաբանական ծառայության փաստաբան Արմեն Թևանյանը, վարչական տարածքների ղեկավարներ, աշխատակազմի ներկայացուցիչներ, տեսանկարահանում և առցանց հեռարձակումը ապահովում էր, համայնքի ղեկավարի մամուլի քարտուղար՝ Մարիամ Քոչարյանը: Նիստին ներկայացված նախագծերով մասնակից էին նաև բնակիչներ՝ Բ.Հովհաննիսյանը, Շ.Գրիգորյանը, Հ.Հովհաննիսյանը, Ա.Ղարիբյանը: Մինչև նիստը սկսելը նախագահողը առաջարկեց օրակարգ ընդգրկել հարցեր, առաջարկությունը ընդունվեց:

ԼՍԵՑԻՆ

1.ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՌԱՋԻՆ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՉՈՐՐՈՐԴ ՆԻՍՏԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 21-Ի ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՐՑԸ

(զեկուցող՝ Կ.Եղիազարյան)

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ ԷԻՆ ՀԵՏԵՎՅԱԼ ՀԱՐՑԵՐԸ

1. Ապարան համայնքի ավագանու 2025 թվականի մայիսի 21-ի առաջին նստաշրջանի չորրորդ նիստի օրակարգը հաստատելու մասին

(զեկուցող՝ Կ. Եղիազարյան)

2. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ապարան համայնքի 2026-2028թթ. միջնաժամկետ ծախսերի ծրագիրը հաստատելու մասին

(զեկուցող՝ Ա. Շեհոիսյան)

3. Հայաստանի առաջին Հանրապետության հոչակման և Ապարանի հերոսամարտի 107-ամյակին նվիրված տոնակատարության անցկացման մասին

(զեկուցող՝ Գ.Խաչատրյան)

4.Ապարանի համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը վարձակալության տրամադրման թույլտվություն տալու մասին

(զեկուցող՝ Վ. Սուքիասյան)

5. Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը աճուրդ վաճառքի միջոցով օտարելու թույլտվություն տալու մասին

(զեկուցող՝ Վ. Սուքիասյան)

6. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ապարան համայնքի Ափնագյուղ բնակավայրի վարչական տարածքում գտնվող՝ քաղաքացու և համայնքային սեփականությունը հանդիսացող հողամասերի նպատակային նշանակությունները և հողատեսքերը փոփոխելու մասին

(զեկուցող՝ Վ. Սուքիասյան)

7. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ապարան համայնքի Եղիպատրուշ բնակավայրի վարչական տարածքում գտնվող՝ «Մայլեռ Մաունթայն Ռեզորթ» ՓԲԸ սեփականությունը հանդիսացող հողամասի նպատակային նշանակությունը և հողատեսքը փոփոխելու մասին

(զեկուցող՝ Վ. Սուքիասյան)

8. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ապարան համայնքի Մելիքգյուղ բնակավայրի վարչական տարածքում գտնվող՝ համայնքային սեփականությունը հանդիսացող հողամասի նպատակային նշանակությունը և հողատեսքը փոփոխելու մասին

(զեկուցող՝ Վ. Սուքիասյան)

9. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ապարան համայնքի Շողակն բնակավայրի վարչական տարածքում գտնվող՝ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի նպատակային նշանակությունները և հողատեսքերը փոփոխելու մասին

(զեկուցող՝ Վ. Սուքիասյան)

9. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ապարան համայնքի Քուչակ բնակավայրի վարչական տարածքում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 02-111-0235-0001, 02-111-0235-0047, 02-111-0235-0048, 02-111-0235-0060 կադաստրային ծածկագրերից առանձնացված 0.59543հա հողամասի նպատակային և գործառնական նշանակությունները փոփոխելու մասին

(զեկուցող՝ Վ. Սուքիասյան)

10. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ապարան համայնքի Եղիպատրուշ բնակավայրի վարչական տարածքներում գտնվող՝ քաղաքացի Վարդանուշ Թևանյանի սեփականությունը հանդիսացող հողամասից 0.5617 հա հողամասի նպատակային նշանակությունը և հողատեսքը փոփոխելու մասին

(զեկուցող՝ Վ. Սուքիասյան)

11. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ապարան համայնքի վարչական տարածքում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի նպատակային և գործառնական նշանակությունները փոփոխելուն հավանություն տալու մասին

(զեկուցող՝ Վ. Սուքիասյան)

12. Ապարան համայնքի սեփականություն հանդիսացող, Եղիպատրուշ գյուղի վարչական տարածքում գտնվող, քաղաքացի Բակուր Դույնաբեկի Հովհաննիսյանի կողմից վարձակալված հողամասերի վարձակալության իրավունքը փոխանցելուն համաձայնություն տալու մասին

(զեկուցող՝ Վ. Սուքիասյան)

13. Եղիպատրուշ բնակավայրի նարչական տարածքում գտնվող, քաղաքացի Միհեր Փարվանյանին պատկանող հողամասը որպես նվիրատվություն ընդունելուն համաձայնություն տալու մասին

(զեկուցող՝ Վ. Սուքիասյան)

14. Ապարան համայնքի սեփականություն հանդիսացող, Եղիպատրուշ գյուղի վարչական տարածքում գտնվող, քաղաքացի Շահեն Համբարձումի Գրիգորյանի կողմից վարձակալված հողամասի վարձակալության իրավունքը փոխանցելուն համաձայնություն տալու մասին

(զեկուցող՝ Վ. Սուքիասյան)

15. Ապարան համայնքի սեփականություն հանդիսացող, Եղիպատրուշ գյուղի վարչական տարածքում գտնվող, քաղաքացի Հովիկ Դույնաբեկի Հովհաննիսյանի կողմից վարձակալված հողամասի վարձակալության իրավունքը փոխանցելուն համաձայնություն տալու մասին

(զեկուցող՝ Վ. Սուքիասյան)

16. Ապարան համայնքի սեփականություն հանդիսացող, Եղիպատրուշ գյուղի վարչական տարածքում գտնվող, քաղաքացի Արմեն Արամի Ղարիբյանի կողմից վարձակալված հողամասի վարձակալության իրավունքը փոխանցելուն համաձայնություն տալու մասին

(զեկուցող՝ Վ. Սուքիասյան)

17. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ապարան համայնքի սեփականություն հանդիսացող, Լուսագյուղի վարչական տարածքում գտնվող, Վարդան Խաչիկի Գալստյանի կողմից վարձակալված հողամասը օտարելու թույլտվություն տալու մասին

(զեկուցող՝ Վ. Սուքիասյան)

18. ՀՀ Արագածոտնի մարզի Ապարան համայնքի Կայք բնակավայրի վարչական տարածքում գտնվող՝ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասը քաղաքացու սեփականությունը հանդիսացող հողամասի հետ համարժեքորեն փոխանակելու մասին

(զեկուցող՝ Վ. Սուքիասյան)

19. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ապարան համայնքի ավագանու առաջին նստաշրջանի հերթական նիստի գումարման օրը և ժամը սահմանելու մասին

(զեկուցող՝ Ի. Թադևոսյան)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՄԲ՝ կողմ –11 , դեմ – 0, ձեռնպահ – 0, ՈՐՈՇՈՒՄՆ ԸՆԴՈՒՆՎԵՑ

(Ավագանու N 83-Ա որոշում)

ԼՍԵՑԻՆ

2.ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2026-2028ԹԹ. ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԾԱԽՍԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՐՑԸ

Զեկուցեց աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի գլխավոր մասնագետ՝ Սերինե Շերիկյանը ներկայացնելով հետևյալը, որ ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ և 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետերի պահանջներով.Հաստատել Ապարան համայնքի 2026-2028թթ. միջնաժամկետ ծախսերի ծրագիրը /ՄԺԾԾ/:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՄԲ՝ կողմ –11, դեմ – 0, ձեռնպահ – 0, ՈՐՈՇՈՒՄՆ ԸՆԴՈՒՆՎԵՑ

(Ավագանու N 84-Ա որոշում)

Ավագանու նիստին 3-րդ հարցի քննարկման ընթացքում միացավ ավագանու անդամ Խաչիկ Գեղամյանը:

3. ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀՌՉԱԿՄԱՆ ԵՎ ԱՊԱՐԱՆԻ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԻ 107-ԱՄՅԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՏՈՆԱԿԱՏԱՐՈՒԹՅԱՆ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Զեկուցեց ԿՄՍԵՍ բաժնի պետ Գագիկ Խաչատրյանը ներկայացնելով հետևյալը, որ ղեկավարվելով ,,Գնումների մասին'' ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի պահանջներով, ՀՀ կառավարության 10.10.2019 թ N 1422-Ն որոշման 1-ին մաի 6-րդ կետին համապատասխան, հաշվի առնելով չնախատեսված այլ իրավիճակը, ելնելով գնման այլ ձևերի կիրառման ժամկետի սղությունից ու անհնարինությունից, ինչպես նաև գնվող ապրանքների բազմազանության հանգամանքից Ապարան համայնքի բյուջեի մարզամշակութային միջոցառումների կազմակերպման և անցկացման համար նախատեսված ընդհանուր ծախսերից մինչև 40.000.000 միլիոն ՀՀ դրամ հատկացնել Հայաստանի Առաջին Հանրապետության հոչակման, Ապարանի հերոսամարտի 107-ամյակին և Ապարան քաղաքի օրվան նվիրված տոնակատարության նախապատրաստման և անցկացման նպատակին՝ համայնքապետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի, սպորտի, առողջապահության, երիտասարդության և սոցիալական աջակցության բաժնի կողմից ներկայացված նախահաշվին համապատասխան: Թույլատրել համայնքի ղեկավարին՝ անհրաժեշտությունից և հրավիճակներից ելնելով տոնակատարությունը պատրաստելու և կազմակերպելու և

անցկացնելու համար անհրաժեշտ բազմատեսակ ապրանքները ձեռք բերել մեկ անձից գնում կատարելու սկզբունքով: Սույն որոշման կատարման պատասխանատվությունը դնել համայնքի ղեկավարի տեղակալ Հ. Մկրտչյանի վրա:
Հաշի առնելով հատկացումների ծավալը ավագանու կողմից հնչեցին բազմաթիվ հարցեր, միջոցառման անցկացման ընթացքի և ընթացակարգերի վերաբերյալ:
Հարցի քննարկման ընթացքում համայնքի ղեկավարի կողմից առաջարկություն հնչեց մանրամասն ներկայացնել ավագանուն միջոցների հատկացումները, ինչպես նաև նիստին հրավիրել միջոցառման կազմակերպիչներին: Ինչի պատճառով քվեարկությամբ որոշվեց հարցը քննարկել նիստի վերջում:
ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՄԲ՝ կողմ – 12, դեմ – 0, ձեռնպահ – 0, հարցը տեղափոխվեց օրակարգի վերջ:

ԼՍԵՑԻՆ
4.ԱՊԱՐԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՐՑԸ

Զեկուցեց քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետ Վահե Սուքիասյանը, ներկայացնելով հետևյալը ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 94-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի դրույթներով և հիմք ընդունելով Ապարանի համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ թույլատրել Ապարան համայնքի ղեկավարին՝ համայնքային սեփականություն հանդիսացող 0,4 հա հողամասերը՝ մրցույթային կարգով, տրամադրել վարձակալության:
ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՄԲ՝ կողմ – 12, դեմ – 0, ձեռնպահ – 0, ՀԱՐՑԸ ՀԱՆՎԵՑ ՕՐԱԿԱՐԳԻՑ

ԼՍԵՑԻՆ
5.ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԱՃՈՒՐԴ-ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՐՑԸ

Զեկուցեց քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետ Վահե Սուքիասյանը, ներկայացնելով հետևյալը ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 67-րդ հոդվածի, <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի դրույթներով, հիմք ընդունելով <<Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով Անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելումասին>> ՀՀ օրենքի, ՀՀ կառավարության 04.06.2020թ. N 1023 որոշման պահանջները և Ապարան համայնքի ղեկավարի առաջարկությունը.Համայնքային սեփականություն համարվող 0,10151 հա հողամասերը՝ 2 լոտերով, աճուրդ-վաճառքի միջոցով օտարել: Հաստատել հողամասերի մեկնարկային արժեքները՝ համաձայն կից աղյուսակի:Համայնքի ղեկավարին՝ ապահովելու աճուրդի հրապարակայնությունն ու թափանցիկությունը, պատշաճ կազմակերպումն ու անցկացումը:

Աղյուսակ

Լոտ	Գտնվելու վայրը, սեփականատերը	Ծածկագիր	Մակերես /ՀԱ/	Մեկնարկային արժեքը / ՀՀդրամ	Նպատակային նշանակություն Հողատեսքը
1	գ.Ջրամբար, համայնքային	0011-0033	0.01119	100.000	Բնակավայրերի բնակելի կառուցապատման
2	գ.Արայի համայնքային	0112-0010	0.09032	720.000	Բնակավայրերի բնակելի կառուցապատման

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՄԲ՝ կողմ –11, դեմ – 0, ձեռնպահ – 0, չի քվեարկել-1
Եղիազարյան Կ.
ՈՐՈՇՈՒՄՆ ԸՆԴՈՒՆՎԵՑ (Ավագանու N 85-Ա որոշում)

ԼՍԵՑԻՆ
6.ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՓՆԱԳՅՈՒՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ՝ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՀՈՂԱՏԵՍՔԵՐԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՐՑԸ

Զեկուցեց քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետ Վահե Սուքիասյանը, ներկայացնելով հետևյալը համաձայն ՀՀ վարչապետի 2009թ.դեկտեմբերի 22-ի թիվ 1064-Ա որոշմամբ ստեղծված՝ ՀՀ

միջգերատեսչական հանձնաժողովի դրական եզրակացությունները և ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 7-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 31-րդ, 43-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետերի պահանջներով, և ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1920-Ն որոշմամբ, հիմք ընդունելով քաղ. Գագիկ Կարապետյանի 27.11.2024 թ N 7877 դիմումի վերաբերյալ համայնքի ղեկավարի դրական դիրքորոշումը. ՀՀ Արագածոտն մարզի Ապարան համայնքի Ափնագյուղ բնակավայրերի վարչական սահմաններում գտնվող, քաղաքացի Գագիկ Կարապետյանի և համայնքային սեփականությունը հանդիսացող գյուղատնտեսական նպատակային նշանակության հողամասերի նպատակային և գործառնական նշանակությունները փոփոխել և դարձնել՝ բնակավայրերի նպատակային նշանակության՝ հասարակական կառուցապատման գործառնական նշանակությամբ, համաձայն աղյուսակի: Որոշման կատարման պատասխանատվությունը դնել համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի վրա:Փոփոխված հողամասը պետական գրանցում ստանալուց հետո ընգրկել 2025թ հողային հաշվեկշկում:

Աղյուսակ

NN	Սեփականա-տերը	Կադաստրային ծածկագիրը	Մակերես/հա/	Փոփոխվող հողամասի նպատակային և գործառնական նշանակություն	Փոփոխված հողամասի նպատակային և գործառնական նշանակություն	Դրական եզրակացության ամիս,ամսաթիվ, համարը
1	Կարապետյան Գագիկ	02-023-0107-0008	0.08249	Գյուղատնտեսական խոտհարք	Բնակավայրերի հասարակական կառուցապատման	04.04.2025թ թիվ 2/փ- 121
2	Համայնքային	02-023-0107-0005	0.03435	Գյուղատնտեսական այլ	Բնակավայրերի հասարակական կառուցապատման	04.04.2025թ թիվ 2/փ- 121

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՄԲ՝ կողմ –11, դեմ – 0, ձեռնպահ – 0, չի քվեարկել-1

Եղիազարյան Կ.

(Ավագանու N 86-Ա որոշում)

ԼՍԵՑԻՆ

7.ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԵՂԻՊԱՏՐՈՒԾ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ՝ «ՄԱՅԼԵՌ ՄԱՈՒՆԹԱՅՆ ՌԵԶՈՐԹ» ՓԲԸ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀՈՂԱՏԵՍՔԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՐՑԸ

Զեկուցեց քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետ Վահե Սուքիասյանը, ներկայացնելով հետևյալը հիմք ընդունելով ՀՀ վարչապետի 2009թ.դեկտեմբերի 22-ի թիվ 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի դրական եզրակացությունը և ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 7-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 31-րդ, 43-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետերով, և ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1920-Ն որոշմամբ. ՀՀ Արագածոտն մարզի Ապարան համայնքի Եղիպատրուշ բնակավայրի վարչական սահմաներում գտնվող «Մայլեռ Մաունթայն Ռեզորթ» սեփականությունը հանդիսացող 1,444 հա գյուղատնտեսական նպատակային նշանակության հողամասի նպատակային նշանակությունը և հողատեսքը փոփոխել և դարձնել՝ բնակավայրերի նպատակային նշանակության՝ խառը կառուցապատման գործառնական նշանակությամբ, համաձայն աղյուսակի: Որոշման կատարման պատասխանատվությունը դնել համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի վրա:Փոփոխված հողամասը պետական գրանցում ստանալուց հետո ընգրկել 2025թ հողային հաշվեկշկում:

Աղյուսակ

N	Սեփականատերը	ծածկագիրը	Մակերես /հա/	Փոփոխվող հողամասի նպատակային և գործառնական նշանակություն	Փոփոխված հողամասի նպատակային և գործառնական նշանակություն	Դրական եզրակացության ամիս, ամսաթիվ, համարը
1	«Մայլեռ Մաունթայն Ռեզորթ » ՓԲԸ	02-040-0158-0007	1.444	Գյուղատնտեսական խոտհարք	Բնակավայրերի խառը կառուցապատման	28.04.2025 թ թիվ 2/փ-139

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՄԲ՝ կողմ –11, դեմ – 0, ձեռնպահ – 0, չի քվեարկել-1

Եղիազարյան Կ.

(Ավագանու N 87-Ա որոշում)

ԼՍԵՑԻՆ

6.ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԵԼԻՔԳՅՈՒՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ՝ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀՈՂԱՏԵՍՔԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՐՑԸ

Զեկուցեց քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետ Վահե Սուքիասյանը, ներկայացնելով հետևյալը համաձայն ՀՀ վարչապետի 2009թ.դեկտեմբերի 22-ի թիվ 1064-Ա որոշմամբ ստեղծված՝ ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի դրական եզրակացությունները և ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 7-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 31-րդ, 43-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետերով, և ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1920-Ն որոշմամբ. ՀՀ Արագածոտն մարզի Ապարան համայնքի Մելիքգյուղ բնակավայրերի վարչական սահմանում գտնվող՝ համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նպատակային նշանակության հողամասի նպատակային և գործառնական նշանակությունները փոփոխել և դարձնել՝ բնակավայրերի նպատակային նշանակության՝ հասարակական կառուցապատման գործառնական նշանակությամբ՝ համաձայն աղյուսակի: Որոշման կատարման պատասխանատվությունը դնել համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի վրա:Փոփոխված հողամասը պետական գրանցում ստանալուց հետո ընգրկել 2025թ հողային հաշվեկշռում:

Աղյուսակ

N	Գտնվելու վայրը, սեփականատերը	Ծածկագիրը	Մակերես /հա/	Փոփոխվող հողամասի նպատակային և գործառնական նշանակություն	Փոփոխված հողամասի նպատակային և գործառնական նշանակություն	Դրական եզրակացության ամիս, ամսաթիվ, համարը
1	Մելիքգյուղ, համայնքային	02-070-0111-0025	0.5139	Գյուղատնտեսական վարելահող	Բնակավայրերի հասարակական կառուցապատման	25.04.2025թ թիվ 2/փ- 136

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՄԲ՝ կողմ –12 , դեմ – 0, ձեռնպահ – 0, ՈՐՈՇՈՒՄՆ ԸՆԴՈՒՆՎԵՑ

(Ավագանու N 88-Ա որոշում)

ԼՍԵՑԻՆ

7.ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՇՈՂԱԿՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ՝ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՀՈՂԱՏԵՍՔԵՐԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՐՑԸ

Զեկուցեց քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետ Վահե Սուքիասյանը, ներկայացնելով հետևյալը համաձայն ՀՀ վարչապետի 2009թ.դեկտեմբերի 22-ի թիվ 1064-Ա որոշմամբ ստեղծված՝ ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի դրական եզրակացությունները և ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 7-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 31-րդ, 43-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետերով, և ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1920-Ն որոշմամբ. ՀՀ Արագածոտն մարզի Ապարան համայնքի Շողակն բնակավայրերի վարչական սահմանում գտնվող՝ համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նպատակային նշանակության 2 միավոր հողամասերի նպատակային նշանակությունները և հողատեսքերը փոփոխել և դարձնել՝ բնակավայրերի նպատակային նշանակության՝ բնակելի կառուցապատման գործառնական նշանակության, համաձայն աղյուսակի:

2. Որոշման կատարման պատասխանատվությունը դնել համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի վրա:Փոփոխված հողամասը պետական գրանցում ստանալուց հետո ընգրկել 2025թ հողային հաշվեկշռում:

Աղյուսակ

NN	Ծածկագիրը և սեփականատերը	Բնակավայրի անվանումը	Մակերես /հա/	Փոփոխվող հողամասի նպատակային և գործառնական նշանակություն	Փոփոխված հողամասի նպատակային և գործառնական նշանակություն	Դրական եզրակացության ամիս,ամսաթիվ, համարը
1	Գ. Շողակն, համայնքային	02-077-0024-0004	0.19537	Գյուղատնտեսական վարելահող	Բնակավայրերի բնակելի կուցապատման	28.04.2025թ թիվ 2/փ- 140
2	Գ. Շողակն, համայնքային	02-077-0024-0004	0.01384	Գյուղատնտեսական վարելահող	Բնակավայրերի ընդհանուր օգտագործման	28.04.2025թ թիվ 2/փ- 140

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՄԲ՝ կողմ –12 , դեմ – 0, ձեռնպահ – 0, ՈՐՈՇՈՒՄՆ ԸՆԴՈՒՆՎԵՑ
(Ավագանու N 89-Ա որոշում)

ԼՍԵՑԻՆ
8.ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՔՈՒՉԱԿ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 02-111-0235-0001, 02-111-0235-0047, 02-111-0235-0048, 02-111-0235-0060 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐԵՐԻՑ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ 0.59543ՀԱ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՐՑԸ

Զեկուցեց քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետ Վահե Սուքիասյանը, ներկայացնելով հետևյալը նկատի ունենալով, որ ՀՀ վարչապետի 2009 թ.դեկտեմբերի 22-ի թիվ 1064-Ա որոշմամբ ստեղծված՝ ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի կողմից 2024 թ-ին տրված դրական եզրակացության մեջ փոփոխվող հողամասերի նպատակային և գործառնական նշանակությունները սխալ են գրառվել, համաձայն որի՝ ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ 1064-Ա որոշմամբ ստեղծված՝ ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի կողմից կատարվել է ուղղում և 21.04.2025 թվականին տրված նոր թիվ 2/փ-128 դրական եզրակացության համաձայն, ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 7-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ և 31-րդ, 43-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետերի պահանջներով, և ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1920-Ն որոշմամբ, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի դրական դիրքորոշումը, ,,Նորմատիվ իրավական ակտերի մասին,, ՀՀ օրենքի 38.1 հոդվածին համապատասխան. ՀՀ Արագածոտն մարզի Ապարան համայնքի Քուչակ բնակավայրի վարչական տարածքում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության 4 միավոր 0,59543 հա ընդհանուր մակերեսով հողամասերի նպատակային նշանակությունները և հողատեսքերը փոփոխել և դարձնել՝ էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների նպատակային նշանակության՝ տրանսպորտի օբյեկտների հողերի գործառնական նշանակությունները: Ընդունել ի գիտություն, որ հողամասում նախատեսվում է կառուցել ավտոճանապարհ: Որոշման կատարման պատասխանատվությունը դնել քաղաքաշինության և հողաշինության բաժնի վրա: Փոփոխված հողամասը պետական գրանցում ստանալուց հետո ընգրկել 2025թ հողային հաշվեկշռում: Չեղյալ համարել Ապարան համայնքի ավագանու 22.05.2024թ-ի թիվ 77-Ա որոշումը:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՄԲ՝ կողմ –11, դեմ – 0, ձեռնպահ – 0, չի քվեարկել-2
Եղիազարյան Կ.
Ենոքյան Դ.
ՈՐՈՇՈՒՄՆ ԸՆԴՈՒՆՎԵՑ (Ավագանու N 90-Ա որոշում)

ԼՍԵՑԻՆ
9.ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԵՂԻՊԱՏՐՈՒՇ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ՝ ՔԱՂԱՔԱՑԻ ՎԱՐԴԱՆՈՒՇ ԹԵՎԱՆՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ 0.5617 ՀԱ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀՈՂԱՏԵՍՔԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՐՑԸ

Զեկուցեց քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետ Վահե Սուքիասյանը, ներկայացնելով հետևյալը համաձայն ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ 1064-Ա որոշմամբ ստեղծված՝ ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի դրական եզրակացության և ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 7-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ և 31-րդ, 43-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետերի պահանջներով, և ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1920-Ն որոշմամբ, հիմք ընդունելով քաղ. Վրույր Ոսկանի Հակոբյանի 30.09.2024 թ N 6413 դիմումի վերաբերյալ համայնքի ղեկավարի դրական դիրքորոշումը. ՀՀ Արագածոտն մարզի Ապարան համայնքի Եղիպատրուշ բնակավայրի վարչական տարածքում գտնվող՝ քաղաքացի Վարդանուշ Ռուսլանի Թևանյանի սեփականությունը հանդիսացող գյուղատնտեսական նպատակային նշանակության 0.5617 հա հողամասի նպատակային նշանակությունը և հողատեսքը փոփոխել և դարձնել՝ բնակավայրերի բնակելի կառուցապատման նշանակության, համաձայն աղյուսակի: Ընդունել ի գիտություն որ փոփոխվող հողամասի վրա կառուցվելու է ինսպեկցիոն ավտոտեղամաս և օբյեկտներ: Որոշման

կատարման պատասխանատվությունը դնել համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի վրա:Փոփոխված հողամասը պետական գրանցում ստանալուց հետո ընգրկել 2025թ հողային հաշվեկշռում:

Աղյուսակ

N	Գտնվելու վայրը. սեփականատերը	Ծածկագիրը	Մակերես /հա/	Փոփոխվող հողամասի նպատակային և գործառնական նշանակություն	Փոփոխված հողամասի նպատակային և գործառնական նշանակություն	Դրական եզրակացության ամիս, ամսաթիվ, համարը
1	Գ. Եղիպատրուշ Վարդանուշ Ռուսլանի Թևանյան	02-040-0101-0034	0.5617	Գյուղատնտեսական վարելահող	Բնակավայրերի բնակելի կառուցապատման	17.04.2025թ թիվ 2/փ- 125

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՄԲ՝ կողմ –12, դեմ – 0, ձեռնպահ – 0, ՈՐՈՇՈՒՄՆ ԸՆԴՈՒՆՎԵՑ

(Ավագանու N 91-Ա որոշում)

ԼՍԵՑԻՆ

10.ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՓՈՓՈԽԵԼՈՒՆ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՐՑԸ

Զեկուցեց քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետ Վահե Սուքիասյանը, ներկայացնելով հետևյալը ղեկավարվելով « Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ և 31-րդ կետերի, 43-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, ՀՀ հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 2-րդ կետի և Ապարան համայնքի միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթի նախագիծը հաստատելու մասին Ապարան համայնքի ավագանու 16.02.2023թ. N 19-Ա որոշման պահանջներով հավանություն տալ ՀՀ Արագածոտնի մարզի Ապարան համայնքի համայնքային սեփականություն հանդիսացող՝ 5 միավոր 0,88784 հա հողամասերի նպատակային և գործառնական նշանակությունները փոփոխելուն: Ընդունել ի գիտություն, որ հողամասերի նպատակային և գործառնական նշանակությունները փոփոխվում են գլխավոր հատակագծին համապատասխանեցնելու, հետագայում դրանք փոխանակելու և /կամ/ օտարելու նպատակով:

Քննարկմամբ 5 միավոր հողամասերից երկուսը՝ Երնջատափ և Հարթավան վարչական տարածքների հանվեց օրակարգում և հաստատվեց 3 միավոր հողատարածք: Որոշման կատարման պատասխանատվությունը դրվեց համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի վրա:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՄԲ՝ կողմ –12, դեմ – 0, ձեռնպահ – 0, ՈՐՈՇՈՒՄՆ ԸՆԴՈՒՆՎԵՑ

(Ավագանու N 92-Ա որոշում)

ԼՍԵՑԻՆ

11.ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ, ԵՂԻՊԱՏՐՈՒՇ ԳՅՈՒՂԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՔԱՂԱՔԱՑԻ ԲԱԿՈՒՐ ԴՈՒՅՆԱԲԵԿԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ՎԱՐՁԱԿԱԼՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՓՈԽԱՆՑԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՐՑԸ

Զեկուցեց քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետ Վահե Սուքիասյանը, ներկայացնելով հետևյալը հաշվի առնելով քաղաքացի Բակուր Դույնաբեկի Հովհաննիսյանի 20.03.2025 թ N 1645 դիմումը՝ իր կողմից 2020 թվականից վարձակալված 02-040-0112-015 կադաստրային ծածկագրով 0.3939 հա հողամասի /վարձակալության վկայական 19052020-02-0066, տրված 19.05.2020թ/ և 02-040-0112-0016 կադաստրային ծածկագրով 1.1255 հա հողամասի /վարձակալության վկայական՝ 19052020-02-0031, տրված 19.05.2020 թ/ վարձակալության իրավունքը այլ անձի փոխանցելու վերաբերյալ Ապարան համայնքի ղեկավարի դրական դիրքորոշումը և ղեկավարվելով ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 620-րդ հոդվածի դրույթներով, ՀՀ Հողային օրենսգրքի 110-րդ հոդվածի 4-րդ մասին համապատասխան տալ համաձայնություն. քաղ. Բակուր Դույնաբեկի Հովհաննիսյանի կողմից 2020 թվականից վարձակալված 02-040-0112-015 կադաստրային ծածկագրով 0,3939 հա հողամասի և 02-040-0112-0016 կադաստրային ծածկագրով 1,1255 հա հողամասի վարձակալության իրավունքը այլ անձի փոխանցելուն: Քաղ. Բակուր Հովհաննիսյանին՝ վարձակալության իրավունքը փոխանցելուց հետո համայնքապետարան ներկայացնել վարձակալության իրավունքի փոխանցման պայմանագրի օրինակը և նոր վարձակալի իրավունքի վկայական պատճեն:

Ընդունել ի գիտություն, որ Վարձակալության իրավունքը ձեռք բերողի նկատմամբ կիրառվում է տվյալ հողամասի վերաբերյալ 2020 թվականին կնքված վարձակալության պայմանագրի դրույթները, ժամկետի ավարտը՝ մինչև կնքված պայմանագրով սահմանված ժամկետի ավարտը, վարձավճարը՝ պայմանագրով սահմանված դրույքաչափով:
Հարցի վերաբերյալ «Լեգիտիմուս» իրավաբանական ծառայության փաստաբան Արմեն Թևանյանի դրական դիրքորոշմանը ծանոթանալուց հետո ավագանու անդամները, որպես հարակից զեկուցող լսեցին փաստաբան Արմեն Թևանյանին: Վերջինս խոսեց օրակարգում առկա ենթավարձակալության հանձնման հողատարածքների իրավաչափության վերաբերյալ:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՄԲ՝ կողմ –11, դեմ – 0, ձեռնպահ – 1, ՈՐՈՇՈՒՄՆ ԸՆԴՈՒՆՎԵՑ
Գոռ Պետրոսյան

(Ավագանու N 93-Ա որոշում)

ԼՍԵՑԻՆ
12.ԵՂԻՊԱՏՐՈՒՇ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՔԱՂԱՔԱՑԻ ՄՀԵՐ ՓԱՐՎԱՆՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՈՐՊԵՍ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՐՑԸ

Զեկուցեց քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետ Վահե Սուքիասյանը, ներկայացնելով հետևյալը ՀՀ կառավարության 2023 թվականի ապրիլի 13-ի թիվ 535-Ա որոշմամբ հաստատված՝ Արագածոտնի մարզի Ապարան համայնքի Եղիպատրուշ բնակավայրի «Մայլեռ» հանգստավայրի ասֆալտապատ ավտոճանապարհի կառուցման ծրագրի իրագործման նպատակով, հաշվի առնելով քաղաքացի Մհեր Փարվանյանի դիմումը՝ իր սեփականությունը հանդիսացող 0,074 հա /կադաստրային ծածկագիր՝ 02-040-0118-0019/ հողատարածք Ապարան համայնքին որպես նվիրատվություն հանձնելու հանգամանքը, և ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 79-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի և ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 594-րդ հոդվածի պահանջներով.Տալ համաձայնություն՝ քաղաքացի Մհեր Փարվանյանի կողմից՝ 0,074 հա հողատարածքը որպես նվիրատվություն ընդունելուն: Համայնքի ղեկավարին՝ կազմել համապատասխան փաստաթղթեր՝ հողամասի նվիրատվություն ընդունելու, ձևակերպման, նոտարական վավերացման և պետական գրանցման ներկայացնելու: Ընդունել ի գիտություն, որ հողատարածքներն օգտագործվելու են ասֆալտապատ ավտոճանապարհի կառուցման նպատակով:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՄԲ՝ կողմ –11, դեմ – 0, ձեռնպահ – 0, չի քվեարկել-1/Եղիազարյան Կ./
ՈՐՈՇՈՒՄՆ ԸՆԴՈՒՆՎԵՑ (Ավագանու N 94-Ա որոշում)

ԼՍԵՑԻՆ
13.ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ, ԵՂԻՊԱՏՐՈՒՇ ԳՅՈՒՂԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՔԱՂԱՔԱՑԻ ՇԱՀԵՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄԻ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ՎԱՐՁԱԿԱԼՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՓՈԽԱՆՑԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՐՑԸ

Զեկուցեց քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետ Վահե Սուքիասյանը, ներկայացնելով հետևյալը հաշվի առնելով քաղաքացի Շահեն Համբարձումի Գրիգորյանի դիմումը՝ իր կողմից 2019 թվականից վարձակալված 02-040-0111-0011 կադաստրային ծածկագրով 0.7347 հա հողամասի վարձակալության իրավունքը /վարձակալության վկայական՝ 12112019-02-0009, տրված 12.11.2019 թ/ այլ անձի փոխանցելու վերաբերյալ Ապարան համայնքի ղեկավարի դրական դիրքորոշումը և ղեկավարվելով ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 620-րդ հոդվածի դրույթներով, և ՀՀ Հողային օրենսգրքի 110-րդ հոդվածի 4-րդ մասին համապատասխան:Տալ համաձայնություն. քաղ. Շահեն Համբարձումի Գրիգորյանի կողմից 2019 թվականից վարձակալված 02-040-0111-0011 կադաստրային ծածկագրով 0.7347հա հողամասի վարձակալության իրավունքը այլ անձի փոխանցելուն: Քաղ. Շահեն Գրիգորյանին՝ վարձակալության իրավունքը փոխանցելուց հետո համայնքապետարան ներկայացնել վարձակալության իրավունքի փոխանցման պայմանագրի օրինակը և նոր վարձակալի իրավունքի վկայական պատճեն: Ընդունել ի գիտություն, որ Վարձակալության իրավունքը ձեռք բերողի նկատմամբ կիրառվում է տվյալ հողամասի վերաբերյալ 2019 թվականին կնքված վարձակալության պայմանագրի դրույթները, ժամկետի ավարտը՝ մինչև կնքված պայմանագրով սահմանված ժամկետի ավարտը, վարձավճարը՝ պայմանագրով սահմանված դրույքաչափով:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՄԲ՝ կողմ –11, դեմ – 0, ձեռնպահ – 1, ՈՐՈՇՈՒՄՆ ԸՆԴՈՒՆՎԵՑ
Գոռ Պետրոսյան

(Ավագանու N 95-Ա որոշում)

ԼՍԵՑԻՆ
14.ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ, ԵՂԻՊԱՏՐՈՒՇ ԳՅՈՒՂԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՔԱՂԱՔԱՑԻ ՀՈՎԻԿ ԴՈՒՅՆԱԲԵԿԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ՎԱՐՁԱԿԱԼՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՓՈԽԱՆՑԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՐՑԸ

Զեկուցեց քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետ Վահե Սուքիասյանը, ներկայացնելով հետևյալը հաշվի առնելով քաղաքացի Հովիկ Դույնաբեկի Հովհաննիսյանի 07.04.2025 թ N 2014 դիմումը՝ իր կողմից 2019 թվականից վարձակալված 02-040-0111-0006 կադաստրային ծածկագրով 0.9886 հա հողամասի վարձակալության իրավունքը /վարձակալության վկայական՝ 11112019-02-026, տրված 11.11.2019 թ/, այլ անձի փոխանցելու վերաբերյալ Ապարան համայնքի ղեկավարի դրական դիրքորոշումը և ղեկավարվելով ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 620-րդ հոդվածի դրույթներով, և ՀՀ Հողային օրենսգրքի 110-րդ հոդվածի 4-րդ մասին համապատասխան տալ համաձայնություն. քաղ. Հովիկ Դույնաբեկի Հովհաննիսյանի կողմից 2019 թվականից վարձակալված 02-040-0111-0006 կադաստրային ծածկագրով 0.9886հա հողամասի վարձակալության իրավունքն այլ անձի փոխանցելուն: Քաղ. Հովիկ Հովհաննիսյանին՝ վարձակալության իրավունքը փոխանցելուց հետո համայնքապետարան ներկայացնել վարձակալության իրավունքի փոխանցման պայմանագրի օրինակը և նոր վարձակալի իրավունքի վկայական պատճեն: Ընդունել ի գիտություն, որ Վարձակալության իրավունքը ձեռք բերողի նկատմամբ կիրառվում է տվյալ հողամասի վերաբերյալ 2019 թվականին կնքված վարձակալության պայմանագրի դրույթները, ժամկետի ավարտը՝ մինչև կնքված պայմանագրով սահմանված ժամկետի ավարտը, վարձավճարը՝ պայմանագրով սահմանված դրույքաչափով:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՄԲ՝ կողմ –11, դեմ – 0, ձեռնպահ – 1, ՈՐՈՇՈՒՄՆ ԸՆԴՈՒՆՎԵՑ
Գոռ Պետրոսյան

(Ավագանու N 96-Ա որոշում)

ԼՍԵՑԻՆ
15.ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ, ԵՂԻՊԱՏՐՈՒՇ ԳՅՈՒՂԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՔԱՂԱՔԱՑԻ ԱՐՄԵՆ ԱՐԱՄԻ ՂԱՐԻԲՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ՎԱՐՁԱԿԱԼՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՓՈԽԱՆՑԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՐՑԸ

Զեկուցեց քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետ Վահե Սուքիասյանը, ներկայացնելով հետևյալը հաշվի առնելով քաղաքացի Արմեն Արամի Ղարիբյանի 07.04.2025 թ N 2015 դիմումը՝ իր կողմից 2019 թվականից վարձակալված 02-040-0111-0012 կադաստրային ծածկագրով 1.1045 հա հողամասի վարձակալության իրավունքը /վարձակալության վկայական՝ 12112019-02-0053, տրված 12.11.2019 թ/ այլ անձի փոխանցելու վերաբերյալ Ապարան համայնքի ղեկավարի դրական դիրքորոշումը և ղեկավարվելով ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 620-րդ հոդվածի դրույթներով, և ՀՀ Հողային օրենսգրքի 110-րդ հոդվածի 4-րդ մասին համապատասխան..Տալ համաձայնություն. քաղ. Արմեն Արամի Ղարիբյանի կողմից 2019 թվականից վարձակալված 02-040-0111-0012 կադաստրային ծածկագրով 1.1045հա հողամասի վարձակալության իրավունքը այլ անձի փոխանցելուն: Քաղ. Արմեն Ղարբյանին՝ վարձակալության իրավունքը փոխանցելուց հետո համայնքապետարան ներկայացնել վարձակալության իրավունքի փոխանցման պայմանագրի օրինակը և նոր վարձակալի իրավունքի վկայական պատճեն:
Ընդունել ի գիտություն, որ Վարձակալության իրավունքը ձեռք բերողի նկատմամբ կիրառվում է տվյալ հողամասի վերաբերյալ 2019 թվականին կնքված վարձակալության պայմանագրի դրույթները, ժամկետի ավարտը՝ մինչև կնքված պայմանագրով սահմանված ժամկետի ավարտը, վարձավճարը՝ պայմանագրով սահմանված դրույքաչափով:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՄԲ՝ կողմ –11, դեմ – 0, ձեռնպահ – 1, ՈՐՈՇՈՒՄՆ ԸՆԴՈՒՆՎԵՑ
Գոռ Պետրոսյան

(Ավագանու N 97-Ա որոշում)

ԼՍԵՑԻՆ
16.ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ, ԼՈՒՍԱԳՅՈՒՂԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՎԱՐԴԱՆ ԽԱՉԻԿԻ ԳԱԼՍՏՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ՎԱՐՁԱԿԱԼՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՐՑԸ
Զեկուցեց քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետ Վահե Սուքիասյանը, հաշվի առնելով վարչական ղեկավարի բացակայությունը հարցը հանվեց օրակարգից:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՄԲ՝ կողմ –12, դեմ – 0, ձեռնպահ – 0, ՀԱՐՑԸ ՀԱՆՎԵՑ ՕՐԱԿԱՐԳԻՑ

ԼՍԵՑԻՆ

17.ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՅՔ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ՝ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՔԱՂԱՔԱՑՈՒ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՀԵՏ ՀԱՄԱՐԺԵՔՈՐԵՆ ՓՈԽԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՐՑԸ

Զեկուցեց քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետ Վահե Սուքիասյանը, ներկայացնելով հետևյալը հաշվի առնելով Կայք բնակավայրում նոր մանկապարտեզի կառուցման համար պահանջվող հողատարածքի ապահովման անհրաժեշտությունը և այդ ուղղությամբ համայնքի ղեկավարի 25.02.2025 թ N 671 գրությամբ՝ մանկապարտեզի համար նախատեսված համայնապատկան հողատարածքին հարակից 02-072-0021-0005 կադաստրային ծածկագրի 0,09831 հա հողամասի սեփականատեր Վարդան Երջանիկի Զոհրաբյանին ներկայացված՝ հողամասի համարժեք փոխանակության առաջարկությունը և այդ ուղղությամբ քաղաքացի Վարդան Զոհրաբյանի 12.03.2025 թ թիվ 1454 դիմումը՝ փոխանակությանը համաձայնություն տալու վերաբերյալ, ուստի համաձայն ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 590-րդ հոդվածի և ՀՀ Հողային օրենսգրքի 63-րդ հոդվածի 4-րդ մասի դրույթներով, ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին" ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի պահանջի. Ապարան համայնքի Կայք բնակավայրի վարչական տարածքում գտնվող՝ համայնքային սեփականություն հանդիսացող 02-072-0025-0028 կադաստրային ծածկագրով 0,09831 հա հողամասը համարժեք փոխանակել քաղաքացի Վարդան Զոհրաբյանի սեփականությունը հանդիսացող՝ 02-072-0021-0005 կադաստրային ծածկագրով 0,09831 հա հողամասի հետ:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՄԲ՝ կողմ –12, դեմ – 0, ձեռնպահ – 0, ՈՐՈՇՈՒՄՆ ԸՆԴՈՒՆՎԵՑ

(Ավագանու N 98-Ա որոշում)

18. ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀՌՉԱԿՄԱՆ ԵՎ ԱՊԱՐԱՆԻ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԻ 107-ԱՄՅԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՏՈՆԱԿԱՏԱՐՈՒԹՅԱՆ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՐՑԸ

Ավագանին անդրադարձավ նիստի արտահերթ 3-րդ հարցին, որը ժամանակավորապես հանվել էր օրակարգից հարակից զեկուցողների ապահովման նպատակով:

Զեկուցեց հարակից զեկուցող ,,Արսեն Խնկոյան,, Ա/Ձ տնօրեն Ա.Խնկոյանը, ով մանրամասն ներկայացրեց նախագծով ներկայացված ապրանքների տեխնիկական բնութագրերը, դրանց օգտագործման և կիրառման ժամանակահատված և անհրաժեշտությունը: Ղեկավարվելով ,,Գնումների մասին" ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի պահանջներով, ՀՀ կառավարության 10.10.2019 թ N 1422-Ն որոշման 1-ին մաի 6-րդ կետին համապատասխան, հաշվի առնելով չնախատեսված այլ իրավիճակը, ելնելով գնման այլ ձևերի կիրառման ժամկետի սղությունից ու անհնարինությունից, ինչպես նաև գնվող ապրանքների բազմազանության հանգամանքից Ապարան համայնքի բյուջեի մարզամշակութային միջոցառումների կազմակերպման և անցկացման համար նախատեսված ընդհանուր ծախսերից մինչև 40000,0 միլիոն ՀՀ դրամ հատկացնել Հայաստանի Առաջին Հանրապետության հոչակման, Ապարանի հերոսամարտի 107-ամյակին և Ապարան քաղաքի օրվան նվիրված տոնակատարության նախապատրաստման և անցկացման նպատակին՝ համայնքապետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի, սպորտի, առողջապահության, երիտասարդության և սոցիալական աջակցության բաժնի կողմից ներկայացված նախահաշվին համապատասխան: Թույլատրել համայնքի ղեկավարին՝ անհրաժեշտությունից և իրավիճակային հանգամանքներից ելնելով, տոնակատարությունը պատշաճորեն կազմակերպելու և անցկացնելու համար անհրաժեշտ բազմատեսակ ապրանքները ձեռք բերել մեկ անձից գնում կատարելու սկզբունքով: Սույն որոշման կատարման պատասխանատվությունը դնել համայնքի ղեկավարի տեղակալ Հ. Մկրտչյանի վրա:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՄԲ՝ (Կողմ – 11), (Դեմ-0), (Ձեռնպահ-0), (Չի քվեարկել-1)

Եղիազարյան Կարեն

ՈՐՈՇՈՒՄՆ ԸՆԴՈՒՆՎԵՑ (Ավագանու N 99-Ա որոշում)

ԼՍԵՑԻՆ

19.ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՌԱՋԻՆ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ԵՎ ԺԱՄԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՐՑԸ

Զեկուցեց համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար՝ Ի.Թադևոսյանը ներկայացնելով հետևյալը՝ հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ապարան համայնքի ավագանու առաջին նստաշրջանի հինգերորդ նիստ գումարելու հանգամանքը և

ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածով հաստատել Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ապարան համայնքի ավագանու առաջին նստաշրջանի հինգերերդ նիստի գումարման օր և ժամը սահմանելով 2025 թվականի հունիսի 25-ին, ժամը 09:00: Նիստը կկայանա Ապարանի համայնքապետարանի վարչական շենքում, Բաղրամյան 26՝ նիստերի դահլիճում:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՄԲ՝ կողմ –12, դեմ – 0, ձեռնպահ – 0, ՈՐՈՇՈՒՄՆ ԸՆԴՈՒՆՎԵՑ
(Ավագանու N 100-Ա որոշում)

ԱՎԱԳԱՆԻ՝

Եղիազարյան Կարեն

Սեդրակյան Հայկ

Կարապետյան Արկադի

Պետրոսյան Գոռ

Խալաթյան Արթուր

Ավդալյան Արարատ

Մխիթարյան Վարդան

Մանուկյան Աղաբեկ

Գեղամյան Խաչիկ

Սահակյան Հովհաննես

Ենոքյան Դավիթ

Մակարյան Վահան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Կ.Մ.ԵՂԻԱԶԱՐՅԱՆ